ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 նոյեմբերի 2023 թվականի N 1898 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱ-ԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1035-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-275-Ն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Վերականգնողական օգնության տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, աջակցող միջոցների պետական հավաստագրերի, ինչպես նաև առանց պետական հավաստագրի տրամադրվող աջակցող միջոցների համար նախատեսված փոխհատուցման գումարի չափը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 22-ի N 1369-Ն և 2007 թվականի ապրիլի 12-ի N 453-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1035-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման վերնագիրը «ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱ-ԳՐԵՐԻ» բառերից հետո լրացնել «ԵՎ ԴՐԱՆՑ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» բառերով.

2) որոշման 1.1-ին կետում «Հաստատել» բառից հետո հանել «աջակցող միջոցների» բառերը.

3) որոշման 1.1-ին կետի 2-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարի-նել «.» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ ենթակետով.

«3) պետական հավաստագրերի հիման վրա տրամադրվող աջակցող միջոցների վերանորոգման փոխհատուցման գումարի չափը՝ համաձայն N 9 հավելվածի:».

4) որոշման N 1 հավելվածի 17-րդ կետը «շարժողական» բառից հետո լրացնել «(ձգողական կամ միոպրոթեզ)» բառերով.

5) որոշման N 1 հավելվածի 26-րդ կետի 6-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

6) որոշման N 1 հավելվածի 26-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակու-թյամբ նոր՝ 7-րդ ենթակետով.

«7) վերին վերջույթի էլեկտրանեյրոմիոգրաֆիա հետազոտության արդյունքը՝ տրված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան լիցենզիա ստացած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության կողմից, վերին վերջույթի միոպրոթե-զով և ֆունկցիոնալ պրոթեզով պրոթեզավորման դեպքում:».

7) որոշման N 1 հավելվածի 28-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«Պրոթեզների վերանորոգման փոխհատուցման գումարի չափը սահմանված է սույն որոշման N 9 հավելվածի աղյուսակ 1-ում՝ նվազագույնից-առավելագույն միջակայքում, իսկ ֆունկցիոնալ պրոթեզների վերանորոգման փոխհատուցման գումարի չափը՝ սույն որոշման N 9 հավելվածի աղյուսակ 2-ում՝ առավելագույն արժեքով: Ընդ որում, յուրաքանչյուր կազմակերպության հետ կնքվող պայմանագրում

սահմանվում են վերանորոգման փոխհատուցման գումարի այն չափերը, որոնք կազմակերպությունը նախապես համաձայնեցրել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ։».

8) որոշման N 1 հավելվածը 37-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 37.1-ին կետով.

«37.1. Եթե ՄՄԾ-ն տնօրինում է սույն կարգի 37-րդ կետով պահանջվող փաստաթղթերը կամ դրանք ՄՄԾ-ին հասանելի են համապատասխան էլեկտրոնային համակարգերի միջոցով, ապա դրանք շահառուի կամ նրա ներկայացուցչի կամ օրինական ներկայացուցչի կողմից չներկայացվելու դեպքում, լրացուցիչ չեն պահանջվում։».

9) որոշումը լրացնել նոր՝ N 9 հավելվածով՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

02.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ